

ՊՈՒԼԿԱՐԻԱ

7 ԼՅՐԱՆԻ ԵՐ
Տարեկան 8 Ձր.
Վեցամսեայ 4 Ձր.

ԱՐՏՈՍԱՆՄԱՆ

Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.



ՄԱՌԻՔ

ԼՐԱԳԻՐ

Ա. Զ. ԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԱԹԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Père G. Kalemkarian Michitaris
tengasce № 4 Vienne

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal

„Ira vounk“

Varna

Редакция на

Вѣстникъ

„Ирѣвункѣ“

Варна

Գրողները եւ չե՞ծ
տրուիր

ԼՐԱԳՐՈՂԸ

Ծանր է. չափ ծանր և միանգամայն անսխալանալի հայ թղթակցի վիճակը գաւառական քաղաքում կամ գիւղում. գրում է՝ վայ է, չէ գրում, լուռ է՝ խիստ վայ է. երկու դիպուածում էլ նա անգուռն բերանով բամբակում, անարգվում ու հալածվում է։ Առաջին դէպքում թղթակցը, եթէ այս կամ այն ցաւալի, անպատուարեւ և միանգամայն փառակար երևոյթի մասին ճշգրիտ տեղեկութիւններ է տալիս մամուլի էջերում ընթերցող հասարակութեանը, նա իր բնավայրում-յան ցագործութեան վայրում—այլևս գիւղի դնկու տեղ չունի. նա երես չունի նոյնիսկ իւրաքանչիւր աշխիռ ուղիղ նայելու, հասարակութեան մէջ երևալու, որովհետեւ կը քարկոծեն, կանպատեն նրան։ Երկրորդ դէպքում աւելի խիստ կերպով նա կը բանբասի, երբ տեսնէ իր շուրջը կատարվող անտանի բերւոյթները և անտարբեր մնալ, լուռ մնալ, աշքերը փակէ՝ չը տեսնելու համար ոչ մի բան։

Ահա գաւառական թղթակցի վիճակը. նա երկու թէ՛ կրակի մէջ կանգնած է, որ կողմը դիմում է, այրվում ու խանձվում է...

Ահա այսպէս կը գրէ թղթակցի մի Ուշակին. Հապա ո՞րչափ դժուար է չորագրի մը վարիչին կացութիւնը, երբ նա ամէն օր կործ ռենի թէ իր բնակած տեղ լոյն և թէ ուրիշ շատ մը միջավայրերու անցւարձերու հետ և պարտաւորեալ իր անկախ կարծիքը յայտնել միշտ իրեն անթափէտ ունենալով ընդհանուրի օգուտը։ Ահա հոս է որ ամէն խնդրոյ մէջ կը գտնուին մասնաւորներ որոնք իրենց եսին ու շահուն վերաւորանք մը զգալով, օրագրողին դէմ ատելութեամբ կը լեցուի։ Միշտ կը պատահի որ այսինչ խնդրոյ մէջ ք զհամակարծիք եղողը այնինչ խնդրոյ մէջ քեզ հակակարծիք կը ներկայանայ. վասն զի քու յայտնած կարծիքը անպատճառ հեռուէն կամ մտէն այն անձին կամ շահուն կամ եսին կը դպչի. այսպէս երեկ քեզ յարգողը այսօր քեզ ատել կը սկսի. քու նկարագրիդ ամբողջութիւնը տարիներէ ի վեր սերտած ըլլալով հանդերձ, թոյլ կուտայ իրեն ուրիշներու ներկայութեան կապած յայտնելու թէ միգուցէ խնդրիդ կաշառուած

կամ իր անձնական շահը հետապնդած ըլլալ. և պարտաւոր վայ կեանի մը մէկին բերնէն թռած այդ խօսքը կարճ օրուան մէջ շոյան կընէ ամբողջ քաղաքը, բազմապատկուելով ու ճիւղաւորուելով. Այսու հանդերձ թէ և արդարութիւնը չի կորսուիր, բայց չէ՞ որ կաղ կ'ընթանայ և միշտ խմբագիրը կը չուծէ։

Այս բաժնի որոշ ցոյց տալու համար օրինակով խօսիմ։

Լուսարարի անկարեւոր խնդրոյ մը համար ժողովուրդը չը պառակտուի, աղգային կ'ստանանք ու հաստատութիւնները լաւ մատակարարելու մասին անցեալները մեր տուած խորհուրդները մէկ երկու տղայամիտ թողականներու այնչափ ծանր գացեր է որ մին իր եղբորը և միւսը իր աղգականին թերթերը դադարեցնել տուին. սա ցոյց կուտայ թէ եթէ ուրիշ չօրիք մըն ալ ձեռք բերնուն գայ պատրաստ են հասցնելու մեզ. թաղ-խորհրդոյ լիտրն ալ այնպէս տարածեր է իր գործաւորներուն մէջ թէ իրաւունքը կաշառուեր է ընդդէմադիրներէն, և գործաւորներէ մին համոզուածի մը ձեռով այդ լսածին արձագանքը եղաւ ուղղակի մեր առջև։ Արգահատանք մը միայն զգացի զրպարտութեան հեղինակին հոգւոյ այն ցածութեան համար ուր միայն շահ, կիրք և ետեւութիւն կը սողոսկեն. ուղղատուութիւն, բարոյական նկարագիր, անկաշկանդ արդարադատութիւն գործնականապէս գոյութիւն չունին անոնց շուկայիկ մտքերուն մէջ. Երանելիները այնչափ միամիտ են որ չեն խորհած թէ իրաւունքի 15 տարուան կեանքին մէջ գտնուած չէ մէկը որ համարձակութիւնը ունենայ վկայելու թէ խնդրոյ մը թեր ու գէ՛մ գրելու համար ո՞ր է ատեն ո՞ր է փոխարինութիւն մ'ընդունած ըլլալ խմբագիրը, կամ շոյի մը թեւաբաններն հետեւած լինի։

Անոնք թող գիտնան թէ մեր ճակատը աւելի մաքուր է քան եկեղեցւոյ այն դրօս ճակատը, որ միմիայն փառասիրութեան համար նորագուելով անոր կնիքը կը կրէ։

Եւ ցաւալի է որ մեր մէջ շատեր կան որոնք կամ իրենց անարժէք եսին, կամ իրենց շահուն և կամ կիրքին գերինները ըլլալով, ամէն դէմքի վրայ իրենց պատկերը տեսնել կը կարծեն։ Այս օրինակ դժուարութեանց առջև է որ օրագրողին դերը տաժանելի է և հերոսական կը համարուի։

Յ. Պուրպիք

Ա. Զ. ԳԱՅԻՆ

Ռուսիոյ Ռոստով քաղաքին մօտ շոգեկառքի վակոնի մը մէջ սպաննուեր է խմբագրատնիւս Միհրան եղբայրը Յարեթ Վարդանեանի որ կարինի մէջ կախաղան հանուեցաւ Եղիշէ Թովմեանը սպաննած ըլլալուն համար։ Յարեթ արդէն իր վերջին նամակներով ըսած էր թէ մինչև վերջին օրերը դաշնակցական տեսլականներ թէ՛ իր, թէ եղբորը և թէ իրենց գաղափարակիցները սպաննելու համար ետեւէն կը դառնան։ Յարեթին այս բաժնի ալ ճշմարտութիւն մը ըլլալը հաստատեցաւ այս նոր ոճիով։

Մօֆիայէ կը տեղեկացնէ թէ տեղւոյն Հայոց լեկեղեցիին ու դրպոցը 67,000 Քրիստոսական կառավարութիւնը գրաւել ու զաւթ է և այս որոշումը արքայական իւքազով վաւերացուեր է։ Սօֆիայի ազգային ժողովը րենով որոշած են վեհ. Չարին դիմում րենի և խնդրել որ հայ ազգին սեփականութիւնը եղող այդ տեղը ազգին ձեռքի կը ցաւին. որպիսի կար կառավարութիւնը կը զիջանի խել հայ ազգին ձեռքէն այդ պատու մը հողը որ ժողովուրդի մը թէ կրօնական և թէ կրթական պէտքերուն կը ծառայէ։

Աստիճան մը հասկանալի կը լար կառավարութեան այդ կարգադրութիւնը, եթէ իբր փոխարինութիւն տրուած գումարը բաւական ըլլար մայրաքաղաքին մէջ նոյն հասարակութեան համար եկեղեցի մը և դպրոց մը կ'ուղեցնէին։ Ամէն կողմէ հարուածուած ու խոշտանգուած հայ ժողովուրդին գլխուն այս տեսակ

հարուած մ'իջեցնել պուկար կառավարութեան չինք սպաննել մինչև այս վայրկեանս։

— Պագոյի, Երևանի, Ալեքսանդրօօփի և Կովկասեան ուրիշ քաղաքներու մէջ բանտարկուած Հայերը որոնք Դաշնակցական ըլլալու կամ Դաշնակցութեան նպատակով արատանութեան տակ կը գտնուին, փոխադրուած են Նիւօքսթրասկ, ուր պիտի քննուին անոնց թուղթերը. դատաւարութիւնը պիտի կատարուի մինչև յառաջիկայ գարունը։

Տփլիսի Օւմ. հիւպատոսը Ռուսիոյ դատական նախարարին վերջերս կովկաս այցելելէն օգտուելով, անկէ խնդրած է որ 1-2 տարիէ ի վեր առանց նախնական քննութեան բանտարկուած Օւմ. հատակներու քննութիւնը փութացուի. նախարարը խոստացեր է մինչև այս ամսոյ վերջը վերջացնել։

— Ս. Պատրիարքը Բիզանդիոնի խնդիրներէ միոյն հետ տեսակցութեան միջոցին բաժնէ թէ Ազգ. Վարչութեան աշխատող տեսնելով որ իրենց բարոյական շանքերը արդիւնք չեն տար մտադրին, են հրաժարական տուլ Պատրիարք հայր մեծ մասհողութեան մատնուեր է ան 10000 ուկրին գործածութեան համար, որ կառավարութիւնը յանձնեց Պատրիարքարանին. Կիւիկիոյ որբերուն և այրիներուն պիտոյթին յատկացնելու։

— Վառնայի հրաժարեալ երան միշտ-ուսուցիչ Պ. Տիգրան Խաչատուրեան նոյն պաշտօն վճարանի մէջ երդի, նամակաւ մը շնորհակալութիւն կը յայտնէ Վառնայի ազգային ոց այն ստուար մասն ուր հաճած էր պաշտպանութիւն և աշակցութիւն նուիրել իր ծառայութիւնը համար։

— Թերթիս խնդրին անցեալ չարթու երկու օրուան համար Պոլիս ճամբորդելուն պատճառաւ իրաւունքը վերջին երկու թիւերը որոշեալ օրէն 1-2 օր յետոյ լոյս տեսան. սակայն առանց պակաս թիւ տալու. Այս առթիւ պիտի յիշեցնենք մեր բաժանորդներուն, որ չի թերանայ տարւոյն ստարգիւնաւոր եղանակին մէջ իրենց բաժնեկիները հատուցանելու որպէս զի շտիպուինք գաճաճի հոգէն բեւեռնորուած անհաճ ընդհատում մըն ալ ընելու։

ՄԻՒ ՀԱՌԱՏԱՔՆԵՐ

Վարդապար ուղեղնիս պիտի տանջենք հասկնալու համար թէ ինչ կ'ուզեն, առնալով, եկեղեցիին թշնամիները, բարոյականի անմեղունակ և իրենց ներքին կեանքով պատմութեան մէջ ամենափառաւոր անունը թողելու օտարմունկով ալ ինչ հակառակորդները:

Բայց, ապահովաբար, ինչ որ կ'ուզեն և ինչ որուն համար կ'ուզեն ամեն բան գոնէ, բացի իրենց անձնաւոր և հեշտամոլ գոյութենէն եկեղեցի, ազգային աւանդութիւններ, բարոյական սկզբունք, ժողովրդին անմեղ ու տրգէտ քաջարի զաւակներուն յորդանաւան տրիւնը, անկարելի բան մըն էր:

Եթէ չէք հաւատար կարդանէք քեզ մը գիրքին քիչ քիչ թիւը: «Դրօշակ» ի 1910 թ. փետրուարի թիւը:

«Սակայն... վարդապարտ պատմականաբան դործովի պարտաւորութիւնները չեն սպառնում ձայն անհատական ալտուրովի ու անձնութեան թափերով—թէկուզ և յաճախ խօսական, անօրինակ ու ապշեցուցիչ»:

Անսահման ու ջրի իրէպիւր, ինքնուրուշման խելայեղ տենդը, մեռնելու այն յոգի, չնայաբարիկ պատրաստակարարութիւնը որ բնորոշում է ուսուերիտաւորութեան բուն մարմնիւնը, յեղափոխական տարրերը, այդ բոլորը տարաբախտաբար, դեռ հերիք չէ, տանելու համար ազատագրութեան ծանր խաչը այս արաստիկի աշխարհում, մղելու համար կեանքի անիւր գէպի փալափարի յաթանակը»:

Ուրիշ տեղ մը:

«Պատրաստ ենք ընդունիլ, որ հայ եկեղեցին ևս, իր բացասական աշխատանքի հետ (բացասական յատկութիւնը անբաժան կերպով կապուած է ամեն մի կղերի և եկեղեցու հետ, իբրեւ ժողովրդական տգիտութիւն ու գրգռանք չափազանց մի հիմնարկութիւն) կատարել է որոշ չափով նաեւ դրական դեր ազգային պահպանութեան գործում: Երբեքս երկար դարերի... Սակայն պատական ճշմարտութեանը մեր այդ տուրքը վճարելուց յետոյ, պիտի տեսնենք, որ այսօր, ազատ մտքի ու հայ ուսման վարձուքով ամառորականութեան յարաբերութեան գործի զիմաց՝ եկեղեցու և կղերի այդ սիշնադարեան ազդեցութիւնը խաւարելու վրայ է... Այդ պրօցէսին մեծապէս ի հարկէ պիտի նկատուի աստիճանական սահմանադրականացումն ու ուսման վարձուքը իրարք ու ուսու պետութիւնը: Ներքին, որոնց արդի կազմը գոյութեան իրաւունք է տալիս հայ կղերի—կաթողիկոսների ու պատրիարքների—ուրիշ զաւաքական դերքն ու առանձնաւորութիւններն»:

Ուրեմն կ'ընդունին կոր որ «ինքնուրուշման խելայեղ տենդը», «մեռնելու պատրաստակարարութիւնը» բաւական չեն յաջողցնելու ընկերվար-յեղափոխութեան զատը այն «սարսափելի» աշխարհի մէջ:

Սարսափելի չեղող նոր աշխարհ մը իրազորած են: Այս փանք որ ուսու անձնութեանը, որ բազմաթիւ են, ալիսպէս բազմաթիւ քան մեր «Տըղաքը», վարդապարթափեցին ու կը թափեն իրենց աղիւնը, մերիները օգտակարապէս պիտի թափեն իրենցը: Ոչ:

Ուրեմն:

Յետոյ, քանի որ թիւք ու ուսու պետութիւնները սահմանադրականացմամբ և ուսման վարձուքով կարելի է կղերական և եկեղեցական ազդեցութեան խաւարումը, կրնանք պա-

հանջել այս ազդեցութենէն որ մարդ մտնէ: Երբ տակաւին չէ ծագած թիւք և ուսու պետութիւններու սահմանադրականացման ու ուսման վարձուքով արեգակը: Ոչ: Եթէ հայ եկեղեցին, երկար դարերու ընթացքին մէջ, դրական դեր կատարեց է ազգային պահպանութեան գործին մէջ, կրնանք, առանց ապշեցուցիչ միամտութեան կամ ըմբոստացուցիչ խարդախութեան, հեշտակել թէ անոր աշխատանքը բացասական եղած է: Ոչ:

Ուրեմն:

Ուրեմն, հայ ձեզի յայտարարեմ, տղաքներ, ո՛վ մեր սիրելի ժողովուրդին ազնիւ, արի ու վեհագի, բայց, քիւր աւաղ, մոլորած, խաբուած, գլխէ հանուած, սեխն ձերմալ, ճերմակիւն սև ըսելու խորամանկ նենգամտութեան կողմէ բռնադատուած դաւալները, ահա ձեզի ըսեմ, Ձեր վարիչները, ձեր աշխարհի անխիղճ որչափ չամփուշ ամբոխավարները իրենք ալ չեն գիտեր թէ ինչ կուզեն: Աւելին կ'ուզէք որ լայնեմ, նոյնիսկ անոնց թերի իմն մարտուած վարդապետութեանց վարդապետները, թէև հմտութեամբ և մարդասիրութեամբ առընցուած խմտատաէր միտքեր, իրենք իրենց մէջ համաձայն չեն ոչ այն սկզբունքներուն վրայ զոր քարոզեցին ու կը քարոզեն, ոչ այն միջոցներուն վրայ զոր հարկ է գործադրել ապահովելու համար իրենց յղացած ահաւոր գործին յաղթանակը:

Ահաւոր գործ, արդարեւ: Վասնզի բուն բայց անգործիքն է դարերու ջրեղունմով զրահուած գործիւններու դէմ: Իրենց իսկ, ընկերվարականներուն, խոստովանութեամբ, քրմաքոնքոն միան է պետական ուժերուն կրակին առջև: Տեսէք մանաւանդ:

«Եւ յալմանակը կարճատե եղաւ: Բունակալութիւնը, սարսափելու չփութութեան գերագոյն վայրկեանին, հըրատարակեց հոկտեմբերեան մեծախոստում մանրիկստը, բայց և չուտով, ծուկ անիւր գէպի յետ... Եւ ուսական մեծ Յեղափոխութիւնը ճարձատեց ընկաւ «հոգեվարք» անուանուած բըռնակալութեան գործի տակ, ուղեկցիան նորէն յաղթանակեց, և «պրօլետարատ-տիտան» որ մի վայրկեան տեսաւ ինչչեք երկրի տէր, որ մի վայրկեան հեղեղեց իր մարքսիտ երկրպագուները սրտեք սրբադնադոյն պաշտամունքի բոցավառ կրակով—«պրօլետարատ-տիտան»ը յուաքանորէն կորացրեց մէջը, համակերպեց...»:

Ահա, խեղճ տղաքներ, որոնց կուրացումը կը մորմոքէ մեր սիրտը, տաւաբախտ չորհրդածներ, որոնց դալար կեանքին չուրջը սպառնալից ձեռով վտանգներուն տեսիլը մահու չափ կը վերաւորէ մեր մտածումը: որ ծաղիկ գոյութիւններ հեղձուցիչ դժնէ փուշերու մատներ էք՝ որովհետեւ զձեզ կը խաբեն, ահա թէ ինչ մահաւոր ըլլալուն չափ ամոլ կուրի կը մղեն զձեզ: Կը հրեն զձեզ դէպի գահավէժը ուր հոսեցաւ ձեզմէ շատ աւելի զօրեղ ու կաշմարտուն աշխատողներու բանակը: Ահա այդ մահալոյս անձոնքի վիշապին աննկուն բռնակալութեան ձեռքէն իսկեղեղմը հափափելու կը քշեն զձեզ այդ անողորմ անագորոյն Յատնները: Ձձեզ տկարներդ, զձեզ անգործներդ, զձեզ հաղածուած և բազմաշարքար ժողովուրդի մը արիւստիք: Բայց անգին դաւակները, կը սալեն կը հրապուրեն, կը վարեն կատարելու ինչ որ չիլցու կատարել ուսական Սեծ Յեղափոխութիւնը:

Հաւատացէք մեզի, ձեր ճշմարտ բարեկամներուն, մեզի որոնք գիշերն ու ցերեկը իբրեւ խաւարած են ձեր

ճակատագրին հոգեբովը: Հաւատաւորացէք մեզի, սխալ է ճամբան որուն մէջ նետեր են զձեզ: Շատ հաւանական է որ օր մը, երբ, ո՛վ գիտէ, թերի չառ ուշ, ընկերվար-Յեղափոխութիւնը պիտի տանի յաղթանակը: Բայց մեզի համար մանաւանդ, ձեզի համար մանաւանդ ապարդիւն ապագամ, մահաբեր է այդ ուղղութեամբ ամէն ճիգ և գործունէութիւն:

Ձգուչացէք, դգուչացէք, դգուչացէք: Տակաւին շատ ուշ չէ:

Ինչ կըսեն ձեզի ձեր առաջնորդները:

«Տղերք, փառքը պիտի ծառնէք պատմութեան մէջ, որ պիտի չլնէ ձեր անունը՝ իբրեւ դատերուն ամենէն սրբազանին, ամենէն վեհագունին, Յեղափոխութեան դասին յաղթանակին աշխատանքներու: Ինչ կարծէ կեանքը, եթէ նուիրուած չէ՛մեր, ընկերվարութեան վեհագոյն իտէալին»:

Թշուառ տղաքներ, մի հաւատաւոր երբ այսպէս կը խօսին ձեզի, իրենք ալ չեն հաւատար իրենց ըսածին: Ու մենք կը տեսնենք, որ առաւել սուտակասպաս ընթերցողներու իբրեւ գաղտնի ուղղած ծաղրի ժպիտով ծուկած այդ չաբաշուք դիմակներուն ետեւէն գծագրուիլ օգրն մէջ սա դժոխային բառերուն:

«Տղերք, դուք հոգ մի ընէք: Գացէք, կուռցէք, ինչէք, ող չէ: Մենք ձեր անունը՝ էլ-նահատակներու դպրութեան մէջ՝ ոսկի տառերով... չէ, ոսկին արդէն սպառած պիտի ըլլայ մեր պատեական անձին հանգստաւոր գոյութեան ապահովմանը համար—անագէ տառերով պիտի արձանագրենք»:

(Դաշինք) Թ. Սեթեւան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՍՐ ՖԵՐԻՏԻԱՆՏ ԵՒ ՌՈՒՄԱՆՈՅԻՆՈՅ ԻՌԱՆԻԱՆԻՔ

Սօփիայի Բէլ թերթը այս վերտառութեամբ հետեւեալը կը գրէ:

«Այսօր Թուրքերը այնչափ գովաբանուած Պուլկարիոյ քաղաքական աշխարհին մէջ անշարժ մնալուն չեն կարող համոզուիլ: Վասն զի մեր պալատէն կառավարուելին չեն գիտեր Մերմէջը եթէ տարբերութիւն մը կայ թիւքի հայրենասէր զինուորականներէն, իսկ մենք ամէն բան վեհափառ Ձաբէն կը ըստասենք»:

Միայն թուրքերը իրենց բապասածներն այսօր եթէ ձեռք բերեն, այսինքն Ռուսներոյ և Թուրքիոյ համաձայնութիւնը թէ և փոքր բան մը սակայն մեծարժէք հետեւեալ մը առաջ բերելուն կասկած չկայ այս ալ քիչ շահ մը չէ որ Պուլկարներուն յուզումը արագացնէ:

«Ռուսներոյ և Թուրքիոյ համաձայնութիւնը Պուլկարիոյ դէմ ըլլալով, եթէ նոյնիսկ տակաւին ստորագրուած ալ չըլլայ այդ շահ միշտ պիտի մնայ Գործին կաւեռ կողմը համաձայնութեան գաղտնի պահուելէն աւելի անոր կարելի ըլլալն է:

Հարկաւ իրենք իրենց մէջ հասկըցուցին թէ երկու կողմն ալ հա-

մաձայնութեան կամ զինակցութեան պէտք ունին և այդ բանին համար իրենց բարեկամութիւնը և մտերմութիւնը ապահովեցին փոխադարձ: Անոնք իրենց կարծօք անհանգարտ Պուլկարիոյ մասին թշնամութիւններն ալ կը ծածկեն կոր: Սակայն Պուլկարիան եթէ ուզէր որ յանուն բարեկամութեան այս գաշնակցութիւնը գոյանար տակէ անհանգիստ ըլլալու կողմ մը չըպիտի ունենար: Գործին գէշ կողմը այդ ալ չէ, այլ բոլոր աշխարհի առջև մեր քաղաքականութեանը քննադատելն է:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանի մէջ չեն դադարած տակաւին աւազակութիւնները և վայրենի յարձակումները: Այս տեսակետով Թուրքիոյ սահմանակից վայրերը աւելի ողբալի վիճակ մը կը ներկայացնեն: Վասն զի սիւննի Բիւրսեք պարսիկ կառավարութեան չփոթ վիճակը յարձար աւելի համարելով յարձակումներ կը գործեն Շիր դաւանքին պատկանող բնակչութեան վրայ: Բայց վերջերս կառավարութիւնը սկսաւ լուրջ ուշադրութիւն դարձնել անհանգարտ քիւրտերուն վրայ, և մաս մը զօրք հանելով յաջողեցաւ Բիւրսեքը փախցնել լեռներուն մէջ և կըրկին դրաւելով Ուրմիոյ նահանգին հիւսիս-արեւմտեան մասը նահանգապետը պատժեց Սիւննիներու գիւղերը որոնք այս ևս ըմբոստութիւնը մէկ կողմ թողած և Թուրքիոյ պաշտպանութենէն յուսահատ սկսեցին ներողութիւն խնդրել պարսիկ նահանգապետէն: Օսմանեան հիւպատոսը բողոքեց իրեն դաւանակից սիւննի գիւղերու պատժուելուն դէմ: Բայց նահանգապետը պատասխանեց թէ այդ գիւղերուն պատիժ տնօրինուած է աւազակներ պահել կամ սնուցանելուն համար և հիւպատոսը իրաւունք չունի միջամտելու երկրին ներքին գործերուն:

Միւս կողմէ Ուրմիոյ սեպտ 4-թուականա լուր կը տրուի, թէ Պարսիկ աւազակներ կողոպտեք և հրգեհն են քիւրտ աւազակներու նախկին թաքստոցները, հատուան, Ձալինտար և Հեաճին գիւղերը, որոնք չուտոնց ի վեր թիւքերու ազդեցութեան տակ ինկած էին: Այս գիւղերու ժողովուրդը փախած է:

ՊՈԼԿԱՐԱՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Պատուաւոր ու պարկեշտ Հայ երէտասարդ մը, որ գիտէ Հայերէն, Պուլկարիէն ու բաւականաչափ ծրարեսէրէն ու տոմարակալութիւն կը փափոքի պաշտօն ստանձնել Հայ վաճառատան մը մէջ 120 ֆրանք ամսաթոյսով:

Դիմել «Իրաւունք» խմբագրութեան «Մ» տառին տակ:

ՅՈՒՆՈՑ ԴԱՍ ՄԸ

Հեռագիրը հաղորդեց արդէն թէ ձերբակալեալ Յոյն պատգամաւորները ազատ արձակուած են։ Բ. Գուռը յոյն պատրիարքարանի վրայ իր յաղթանակը կատարեալ ընելու համար յաղթական մի վեհաձայն կեցուածքով մը ազատ կը ձգէ իր թաթին մէջ սեղմուած ենթակային օձիքը, անոր հասկըցնելու լուրջութիւնը թէ բողոքելու յաւակնելի իսկ անպատիւ չի մնար Սահմանադրական Թուրքիոյ մէջ և զիջում ու զղջում է միայն որ իր սերունդը կակղացնէ։

Ժէօն-Թիւրքերը իրենց նպատակին հասան այս միջադէպով ցոյց տուին թէ հպատակ ցեղերէն որն ալ բլլալ կառավարութեան համակերպելէ զատ ուրիշ միջոց չունի։

Բայց առանց այդ միջադէպին ալ մենք պրդէն համոզուած էինք թէ հպատակ տարրերը իրենց իրաւունքը յարգել տալու համար համեմալ գործակցութեան վստահութիւն ձգելու չունին։ Բանի մէջ խորտակուեցաւ Յոյններէն որ իրենց վիճակակից ուրիշ տարրերը արհամարհելով, ինքզինքնին ցուցնել կուզէին, ահա այս միջադէպը անոնց դաս մը եղաւ։ Դաս մը այն Յոյններուն որոնք դեռ երէկ քննադատեցին Հայոց պատրիարքը թէ ինչո՞ւ համար Պուլկարաց Ս. Էքսարքին համեմալ գործուեցութեան խօսքեր ըրած է յանուն կրօնապետներու։ Յունական ետեւիները այս կերպով ջախջախեցին վերջին սիրտը և մեզ յուսար թէ գէթ ասկէ յետոյ Յունաց Պատրիարքարանը պիտի գիտնայ կառավարութեան դէմ յարաբերական խնդիրներու առթիւ միւս հասարակութեանց հետ համեմալ գործելու գործը։ Արդէն մօտեցած են օրերը որ երկրին բոլոր ուղիքները տարրերը, մանաւանդ քրիստոնեայ աղգութիւնները, կարգ մը նոյնանման խնդիրներ ունենան կառավարութեան հետ ինչպէ՞ս զինուորական կրթական, կայսրածական և հոգային խնդիրները, որոնց մասին ամէնն ալ նոյն շահով պիտի տապկուին։

Երևոյթները ցոյց կուտան թէ սա ժէօն-Թիւրք կառավարութիւնը ձուլումի քաղաքականութեան չպիտի ետ կենայ։ Գործուած ամեն զրկում և անարգարութիւն այդ ձուլումի քաղաքականութեան հետեւին է։ Այն է որ բանականութիւն մէջ քրիստոնեայ զինուորները զատ վաշտեր կազմել և քանակներ կարգել կը մերժէ, այն է որ բոլոր հասարակութեանց վարժարանները թրքական միօրինակ ծրագրի մը ենթակից կը նկատուի, այն է որ քրիստոնէից հոգ քաղաքական

գործուած գաւառակներու մէջ իսլամ գաղթականներն կը տեղադրեն, որպէս զի քրիստոնեաները ներդուին ու ցրուին։ Այն է որ քրիստոնէից գաւառներ կառուածները իսլամ յաղթականներու կը սեփականացնէ։ Այն է որ եկեղեցիներու և վանքերու սեփականութիւնները ձիւղաղելի պատրուակներով պետութեան կը գրաւէ, որպէս զի քրիստոնեայ հպատակները դիւրութիւն չունենան իրենց ազգային դատարանները ստանալու կամ իրենց ազգային վարժարանները յառաջացնելու։

Բոլոր նարեաց մայրը եզոյ այդ ձուլումի քաղաքականութիւնը ժէօն-Թիւրքերը Միտհաթ փաշան ժառանգած ըլլալով, շատ զօռնաբար պիտի ըլլայ զանոնք անկէ ետ կեցնել։ Այդ դժուարութեան յաղթելու համար Եախ Յոյնին ու Պուլկարին, Հայուն և կաթոլիկին գործնականապէս համեմալ խնդիրը անհրաժեշտ է։ անկէ յետոյ կուգայ ոչ քրիստոնեայ հասարակութեանց կամ աղգութեանց հետ ալ համեմալ խնդիրը։ Երբեք այս միջոցով կարող կ'ըլլա՞ր ժէօն-Թիւրքերուն հասկնել թէ այն երկիրը ու պետութիւնը որ Օսմանեան կայսրութիւն կ'անուանուի, միայն Թուրքիոյ չէ, այլ այն ամէն ցեղերուն ու լեզուներուն ներքին, որոնք այդ երկրի բնիկներն են, և որոնք ըստ բնականութեան և բնականաբար իրենց խնդիրներն ունենան իրենց ազգային խնդիրներուն լեզուն, կրօնը սեփականութիւնները և հասարակութիւնները պահելու և զարգացնելու։ Այս բանը ժէօն-Թիւրքերուն հասկընա ստիպելու համար (որովհետեւ կամովին հասկնալ չեն ուզեր) հարկ է անհրաժեշտ է որ Եախ քրիստոնեայ կրօնապետները կամ Պատրիարքարանները իրենք իրենց մէջ համեմալ խնդիր։ Այս գործին նախաձեռնութիւնը տալու լապէս Յունաց պատրիարքարանին վրայ կը ժանրանայ, որ կը յուսանք թէ նոր առած դասին խրատութեամբ, այլևս չի յապաղիր առ այդ հարկ եղած քայլերը առնելու։

Յ. Գ.

ՃԱՄԲՈՒՆՈՒԵՐ

Ճիշտ մէկ տարին է վեր Պուլիսը չէի տեսած։ Չձօնուած համար վառնայէ Պուլիս կարճ ճամբորդութիւն մը բնական է որ միայն արտաքին երևոյթները կրնայ դատել։ Ինչքան մը տուողով այդ պիտի պատկերացնենք հոս։ Յունական շողանալի մը մէջ ալիկոծ ծովու մը բոլոր տաճանքը, արտաքինը և մօտաւորէն ընկղմումի երկրորդ 16 ժամ կրկնէ ու ճամբորդ թուրքերու «Սլաւ Սլաւ»ը և հայ կիներու Աստուածամայր դուն յասիր» աղէխարչ ու խլացուցիչ աղաղակները ամբողջ

գիշեր մը լսելէ յետոյ վերջապէս Պուլիսը ներդուցը կը մտնենք և մահամբձ հիւանդի մը կիտու ծունդերով ոտքի կենդանի ներդուցի երկու կողմի տեսարանները դիտելու։ Ներդուցի երկու կողմի տեսարանները հոյակապ չէնքները, դեղեկակիրտ պալատները դիտելով կանցնինք։ Իսկ չքնադէմ Չըրադուի տեղած խաչած չորս պատեր միայն կը տեսնենք։ Եւս մէկ տարուան տարբերութիւնը ամբողջ ներդուցին, Թուրք ուղեկից մը հպարտութեամբ արքայական պալատները ցոյց տալով «Պուլկարիոյ մէջ ասանկ պալատներ ուր պիտի գտնես» կըսէ։ Կը պատասխանեմ։ Պուլկարիոյ մէջ միայն հոյակապ վարժարաններ և զօրանոցներ չեն կը նային։ Պատասխանս կարծեմ ծանր եկաւ Թուրքին որ ալ չը խօսեցաւ։ Մարդը զգաց թէ քարը ուր կը դարձնէր։

Յունական նաւ նստած ըլլալուս համար պատժոյ արժանի էինք, ուստի պոյճոտի դառնութիւնը մենք ալ կրեցինք։ շողանալի բացը կեցաւ։ քարափէն հեռու Սալոնիկաւորները չըջապատեցին մեզ ստիպեալ յանձն առինք քիչ մը ալ մակոյկի մէջ օրորուել։ Խտրական մը անմիջապէս թուրքի մը վրայ քանի մը բառ գրելով, յանձնեց մեր յոյն մակոյկավորին, քիչ մը հեռաւ նալէ վերջ, առի թուրքի և կարգադր։ «Է երկրմարդ Լալաթա պիտի ելեն» գրուած էր։ Յոյնը ըսաւ «այն թող կարօէ որ Լալաթա կը հանեմ» և մեզ տարաւ կամուրջին մօտ տեղ մը, ուր կէցամք կ'անք մեր գոյքերուն ռաւ առանց մաքսախոյզը և անցաքիւր շարձողը մը հանդիպելու։ Երբեք անհրաժեշտ տեսնական փոխառ նաւ նաւաղի տեսնական փոխառ համ էինք։ Այս պարագան կապացուցանէ թէ Սամանկան մայրաքաղաքին մէջ իսկ ոչ մաքսային ոչ ստիպականական լաւ կազմակերպութիւն կայ տակաւին։ Երկու օր ըմանական գործերս և տապալակում, միշտ աչքերս չորս կողմ կը պատցնեմ Պուլիս մէջ փոփոխութիւն մը նշմարելու։ Եւ մէկ փոփոխութիւն բացը սալապատակներուն վրայ բացուած ալի պարագան զոր ժէօն-Թիւրքը ընթերցարաններ է չորքոտանի բնակիչներէն կորզելով, անցորդներուն հանգստութեան յատկացնել, Պուլիս փողոցները չուն չէր մնացեր հատ մը չը տեսայ։ Անբնական չորքոտանիներուն պատկեր տարափոխիկ հիւանդութեանց հաւանականութիւնն ալ պակեցուցած էր։ Բայց չի մօտնամ յիշելու թէ քարափէն չուրջ 100 մէթր անդին ձիւն մը հազարն դիակը կը ծփար ծովին երեսը, մինչ Խաչաղի և Գասրմիաչար թաղեր գօլթարայ մարեր կը պատահէին և աղտոտ արապ հաւ ճիւղերու խումբեր Պուլիս բնակիչ հրապարակներուն և մարդաշատ փողոցներուն վրայ կը վխտային։

Ժողովուրդին մանաւանդ առեւտրականներուն ետեւը ողորդէ է, բայց իրեկական դէմ է որ Թուրքերը Բամալանի բերմամբ հազիւ կէսօրին բունէ ելած շուկաները կը լցուին քիչ մը թթու դէմքով, իսկ աղաքից թրքերէնները աւելի զուարթ և բոսպական չըրազեցաներուն չափ սեղմ պիւրկիւններու տակ իրենց նուրբ մէջքին և մերթ ամբողջ իրանին քարեկտութիւնը ի հանդէս կը բերեն ասոնց մէկ կարեւոր մասն ալ դէմքի շղարչն մէկ կողմ նետած չի քաշուիր պէկոտ ակնարկներէ և արդուզարդի վաճառատանց աղջիկ հրմշակուելէ։ Գաւառները հեռու հեռէ կորսնցնել սկսած է իր նշանակութիւնը։

Նպաստաւոր օրով մը զբօսայի վերադարձ մ'ունեցանք Պուլկարիա շողանալով, բայց տխուր պարագայ մը

եկաւ ինձ խորհիլ տալ թէ թերեւս բռնակալութեան շրջանը կամ յանկարծախան ազատութեան գինովութիւնը Պուլիս հայուհիներուն մէկ մասին պարիստոթիւնը խաթարէր է։ Զուգարկաբար այս երկրորդ անգամն է որ Պուլիս վերադարձիս շողանալին մէջ ակնատես կըլլամ առանց այդ ուղեկցի ճամբորդող հայ աղջիկներու պղծալի վարմունքին։ Երկու անգամին ալ հասուն հայուհիներ փոխանակ պատուաւոր ընտանիքներու մօտենալով անոնց ուղեկցութիւնը վայելու նստին մէջ ինքզինքնուն կը թոյլատրեն մինչ այդ ժամը իրենց անձանթ յոյն երկտասարդի մը մտերմանալ, անոր հետ մօտ անկիւնները ստանձնանալ և վերջապէս գիշերը ծունդ ծունդի մէկ ծածկոցի տակ պառկել։ Ամէն աղաքէ ճամբորդներու աչքին առջև պարզուող այս գայթակղութիւնը ինձ և հայ ուղեկիցներուն գէշ ազդեց, մանաւանդ երբ մեր ուշադրութիւնը հարաւորող օտարներ ալ չի պակեցան։

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ

Անիրաւաբար Հայերէ գրաւուած հողերու խնդիրը կը մնայ տակաւին լճագման մէջ։ Բայց կառավարութեան և թիւրք մամուլի յայտնած կարծիքներէն որոշագոյն կը հասկցուի որ անոնք միտքերին դրած են հայ հողատէրերուն հողերը Թուրքերուն և քրիստոնեան ձգելով հայերը Հայաստանի սահմաններէն դուրս գնելու գաւառներու մէջ ցըրուելու։

Աղաքային վարչութեան կողմէ նախարարներուն ներկայացած պատուիրակութեան հողային խնդիր յոյն մասին ստացած պատասխանն ալ այս անգամ նոր յոյս մը չի ներշնչեր։

Նոր դատապարտուած 6-7 Ձէյթունցիներու մասին դատական նախարարը խոստովանեցաւ թէ սխալի մը հետեւեցէ և խոստացաւ թէ այդ դատապարտեաները պատժէ զերծ պիտի մնան։

Զարանճագէն նամակներ ու հեռագիրներ շատ տխուր կը ներկայացնեն տեղւոյն հայոց վիճակը հողերը կը մնան բռնակալութեան ձեռքը։ Հայոց կեանքն ալ ապահով չէ հոն։

Հողային խնդրոյ համար պետական խորհուրդը օրինագիծ մը պիտի պատրաստէ, Օսմ. Բաւլըմանին ներկայացնելու համար։ Երևոյթները ցոյց կուտան թէ թէքնիչ յանձնախումբին տեղեկապիւնները և թէ պետական խորհրդոյ պատրաստելիք օրինագիծը հայոց աննպաստ պիտի ըլլան։ Իսկ Բաւլըմանին մէջ իսլամ եւ քրիստոնեայները արդէն պատրաստուած են ոչ թէ արգարութեամբ դատելու, այլ Հայերը իրենց բնագաւառներէն ցրուելու։ Հեռուացնելու յետին մտքով։ Ուստի այդ բոլորէն օղուտ սպասել տեսելորդ է։

Մարտի 10-ին

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻԻԱ

Մատաղամ Հագգը բաշտ Բա-
րիտէ ֆրանսիացի միւստէրիւն
վէ պանգէրիւն էլէկէրիւն
հարըլարագ՝ հոտիւն իսթէնիւն
բարայը գործարագ իշիւն անլէրի
գանտըրմայա մուվաֆագ օլմագ-
սըլըն Սթանպուլ ավտէթ իթտի
Ֆրանսիացի աշըգտան անլաթ
աըլար քի՝ Ժէօն-Թիւրքիւն նէ
մալիյսիւն վէ էէ ան բօլթիւ-
գասընա էմիլիէթիւն հագ տըր-
իսթէնիւն իսթիգնալը իթմէթ
իշիւն կէօրիւկ հասըլաթը կիպի
գալի իթմիւթ իսթէրիւկ տէտի-
լէր վէ հոտիւն վէրլէթէթ բա-
րանըն պիւր պէօյիւկ գըսմընա
պէտէլտէ մուհրմաթը հարպի-
յէյէ ապիւր սըբարիշ վէրմէթ
լէթիւթ իթտիլէր:

Մալիւ օլմըլը իւզրէ, էլլոբա
տէվլէթիւնիւն միլիօնլարլէ լի-
րա հոտիւն վէլէպիլէթէթ օլան-
լար պաշընա իսկիլթէրա վէ
Ֆրանսա տըրլար արկէրլէրի հա-
նի Աստըրա, Ալաիւ, Բուսիա
վէ իթալիա քէնտի իշիլաթը
իշիւն տալի շոգ տէֆա մէլթիւր
իքի տէվլէթիւն սէրմայէ տար-
լարընա միւրաճաթ իթմէկէ
մէճպուր օլիյօրլար, Շու հալտէ
էն իշիւն սուրէթտէ հոտի ազ
ֆայիլէթ բարա ալմագ իշիւն հո
իսկիլիւն վէլէ հալտա Ֆրանսիացի
լարա միւրաճաթ մէճպուր
տըրլար:

Հագգը բաշտ Սթանպուլ ավ
տէթլէ ֆրանսիացի շարթարը
իւզրէն տիկէր նալըրլար իլէ
պիւր միւլէթէր իթմէկէ քէնտի
սիւնի մէճպուր կէօրիւկ մէսմու-
թա կէօրէ մէլթիւր շարթարըն
պէօյիւկ գըսմըն գապու իթ-
մէկէ գարաթ վէրիլիւն տիւր:

Էքօ յը Բաթի հալիյօր քի՝ Բա-
րիլ Օսմանլը էլիսի Նսաու բա-
շտըն պէյանը իւզրէ, Սթանպուլ
կէօրիլիկէրիւն հասըլաթը իթ-
միւթ վէրիլէթէթ (սէնտէ պիւր
միլիոն լիւրա տըր) քէզ իթթ-
լար վէ սալիլէ Ֆրանսիացի ֆայիլ-
գալարըն սըբարիշ իթմէթ իշիւն
մուգովլէլէ հագը կիւնտէ իթ-
գալաճագ տըր:

Իշիլէ պու շարթար գապու
օլմըլը, հալտէ ֆրանսիացի հիւ-
թիւթիլիւն իսթիգնալ մուգովլէ-
լէսիւն իւզալանմասընա պոն-
գէրիլէ միւստէ իսթէթտիւր:

Ժէօն-Թիւրք կա զէթալարը
հոտիւն թոզ գօնմասըն իշիւն
պու հագըգաթը կիլլէյուկ, պի-
լիլ իսթէթիլիլի կիպի պիլա
թէթիւն վէ պիլա շարթ իս-
թիլիլիլ իւզալանմագ տըր հա-
լիյօրլար Պու հալանլար քէնտի-
լէրիւն ալտաթմագ իշիւն տիւր:

Սէրէօգտէ՝ Էէնի գանձ մու-
ճէպիւնէ՝ Բուսիա թալաթիւնտան
Պուլիլարա իթէթիլ իսթիլէթի

լաղըմ կէլէն քիլիսէլէրիւն թէս-
լիլիւն Պուլիլարա գապու իթ-
մէթիլլէր վէ Բուսիա իլէ պէրա-
պէրճէ պու քիլիսէլէրիւն ինրա
պիւն ու իպալթէթ իսթէթիլլէթ
լէրիւն պէյան էլլէթիլլէրիւն
Ա. Պուլիլար թէլէկրաթը իսպէթ
վէրիյօր:

Քէօթէնտիլ վէ Գուհանօվա
շըմէնտըթէր իսթիլարըն պիւր-
լէլլէթիլ իշիւն թիւրքիա թարա
ֆընտան շըգարըլան գօմիսիւնլար
իքմալը վաղիթէ իթմիլլէր տիւր:

Գուհան Էլլէթի Սթանպու-
լու պիւր շոգ մահալլէլէրիւնտէ
պաշ կէօթէթիւն օլտըլը կիպի
կիւն պէ կիւն իսթալարըն մըգ-
տարը արթալօր տըլգաթա շա-
յան օլան նոգթա շու յըրթի
իսթալարըն 10տէ սէթիլի
թիւրք վէ պիւրի հալտա իսթի-
լիլ Սթանպուլը նըթը իսթիլիլ
օլտըլը հալտէ պուլլարտան լէթ-
նաթիլ իսթալա իշիլիլիյօր:

ԵՐԵՎԱՆԻՍՏԱՆ ՎԷ ԹԻԻՐԻԻԱ

Բարիլ օսմանլը էլիսի էքօ տը
Բարիլ շու պէյանաթտա պուլլու-
մուշ տըր:

Ալմանիտան իքի զըրհլը
ալմալտան էվլէ Օսմանլը հիւ-
թիւթիլ պէնրմ վաթիլթա իլէ
ֆրանսիացի հիւթիւթիլիւն սիլալ
թիւրք Բարիլ պիւր հարպ վաթիլ
Թիւրքիայա սալաթ մը վէ էլ-
լի շու իթէլլարաթը կէօթէթիւն
տիւր: Եւրոպիստան իթալիա
տան 10000 թօնօլը պիւր զըրհլը
սալթըն ալտը, Եւրոպա պահիլէ
գուլլէթիլիւն պու սուրէթիլէ ար-
թըրլլալտըն մագսէթի Աթի-
նաթա կիլլի թուլթուլալօր, Սէ-
սէլէ կիլլիլ իւզրիլիւնտէ տիւր, վա-
գաա պու հալըրլըլար պիլիլա-
հալթալ իսթէթիլ, ֆագաթ գանլը
պիւր վագաանըն հոտիւն ալմագ
իշիւն իքթիլա տըրքի հէր տա-
լիլ Եւրոպիստանտան տահագուլ-
վէթիլ պուլլուլալ, Շու հալտէ էն
սո սիստէմտէ 15,000 թօնօլը
պիւր զըրհլը սալթըն ալմագ իս-
թէթիլ Պուլլուլէ պէրապէթ հիւ-
նու իթմէթ իշիւն հիշ պիւր բը-
կըմմըլը հագ տըր, իշպու իթտ-
պիլիլիլ սուլլըն մուհաֆագսը
իշիւն տիւր: Էէնի իւզլէ իթ-
տըթիլ թէթիլիլ Ֆրանսանըն
սալթագ իշիւն էլլէ պիւր զըրհլը
լըսը պուլլուլալ, վէ պիլ լէճ
պուլ օլտըլ իքի զըրհլը Ալմանի
ատան ալմալա:

ՏԱԽԻԼԻԹԷ

Չարիցա հաղթէթիլի կէլէն
հաթթաթան պէրու վաճառ գու-
պիւնտէթիլ էլթիւնիլաթ Քէօ-
կիւնտէ պուլլիլիյօր:

Թիւրք-Պուլիլար սիւթըր թա-
լիլ իշիւն իքի տէվլէթ թա-
րաթընտան թէթիլ օլման զօ

միսիլը մալսուս պիւր վագըթ-
տան պէրու թաթիլիլ մէլլուլի-
յէթ իթմիլ իքէն՝ շիլաթ թէթ
րար իլէ պաշալըն տըր:

Նարանհագ բարթիլիլի
սրկանը օլան Միւր կաղէթալը
Տէմօլրաթալ իշիւն շէյլէ հո-
լիյօր «պիլիլ գահրաման տէ-
մօկրաթալըմը թիւրքիա իլէ
պաշագ բալիլիլալ մէյտան վէր-
մէյուկ հալընը թահրիլաթա
(գըրուլ) պագալար թիւրքիա
յա գարըն մուհարէպէ ալագ ի-
շիւն շոգ միւնտիլա սալթար
կէլիլ, ֆագաթ տէմօկրաթալ տէ-
մէյօրլարթը՝ Նիլու՝ մուհարէպէ
իթմէթիլիլ իսթիլլէ շու տէսի-
սէի կէօթէթիլիլալ իսթիլ Նարան-
հագալարտան գօրգարագ մուհարէ-
պէ ալմալըլար, Չար Ֆէրաթի
նանտ քիմ պիլիլ նէ գաթալ կիւ-
լէր քէնտի միւնտիլլէրիւն պու
տէսիսէի իւզրիլիլ, Շու գօրգագ
տէմօկրաթալ հալընը սօգ-
լարտա վէ շանթալարտա պա-
պաթիլիլիլ սալթարալ ֆագաթ
թիւրքիլլէրիլ թիլիլիլլէր:

Միւնտիլ թաթէլ արթը
ալտէթ իթմէթիլ իշիւն իսթի-
լէ կիլթիլ վէ բալիլիլալ
վէրիլիլ տիւր:
Սալըլ իսթիլիլ նալըրը թէնէ-
րալ Բարիլիլ իշիւն Բէթպուրկա-
էլիլ վէ սալըլ Մալիլիլ նալըրը
Սալապաշէլիլ վիլէնա էլիլիլ
թալիլ օլմանագալարը գարա-
լալըն տըր:

Թիւրքիա վէ Բուսիա պիլ
նիւնտէ իթթիլիլալ թէլիլիլ սա-
լըլ իսթիլիլ նալըրը Բարիլ-
թիլլէ իթթիլալալըլըլընա համ-
օլմըն իթթիլալալըլըլընա համ-
օլմընիյօր:

Գապիլէտէ Էէնի պիւր թէպէտ-
տիլալ վուգու պուլլաճալը շալի
օլմուշ տըր:

Ի Թ Թ Ա Ր

Ապօնէլէրիլիլ կապէթապէ-
տէլիլիլալ պօրճլարըն կէօնտէր-
մէլէրիլ լէճա օլմանտը:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Օրիլիլիլ Թ Ա. Թօրապալիլալ
Թարգա սօրապանը, Պուլիլարա
Պատմութիւնը արգէն ղըկաթ Էնի
բուլ, վաթիլ լաթաթիլիլիլ
նոյ պէս ալ ձեզ:

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԻԱՆԻԿ»

ԵՐ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԱՐԹԻՐ ԵՆ ՋԱԹԱՐԻ ԳԻՆԵՐԻՆ
ԱՄՆ ՏԵՍԱՆ ԳԱՐՄԵՐ
Հարսանկան Հրալիլալ, Այցասմա, Նամակալուլի, Պահարան
Պահարանիլ, Հալտըրիլիլ և ուրիշ գործեր
Հայիլիլ, Պուլիլարիլ, Պահարանիլ և Ռուսալիլ
Անգ ղիլիլիլ ճալիլիլ գոհագու ալու համար Տպարան Նոր
քիլիլ տուաթ է տէնալիլիլիլ սիստէթի
գործիլիլ և տուեր
ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆԱՎՃԱՐՈՎ ՍԸ

ԿԱՐՄԻ ԺԱՄՈՒՑ

Ժէօն-Թիւրք կապալարութեան զը-
մանաճ մէկ սրոյնում թուրքիոյ
մէջ վաճառումը արգիլուեցաւ այս գե-
ղեցիկ երկասիրութեան որ ողբացեալ
Արիւրի գլուխ գործոցն է և կարժ
որ ամէն հայու տուն անկէ հատ մը ու-
նենայ:

Արտասանման մէջ Կարմիր Ժամուցի
միակ կեդրոնատեղին է «Իրաւունք»
խմբագրատունը կը գտնուի նաև հե-
տեալ տեղերը:

- ԳԱԿՐԻՔ Տ. Արայ Գալէմեան
Ոսկերիլ ի Խան-Խալի
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ Տ. Յարութիւն Աբրա-
համեան, Մէյտան փողոց
ՊՈՒԳՐԷՆ Տ. Ղ. Կոնիկեան
Ազգ. Վարժարան
ԴՕՆՍՈՒՆՅԱ Տ. Սիւսկ Մէլիքեան
ՊՕՍՈՒՆ (Ամբիկա) «Ազգ» շաբաթա-
թիւր խմբագրատունը
ԳԻՆ 1 Քր

Վաճառու համար շատ ուղղոն-
տուն մասնաւոր զեղչ իսկ վճարումը
բանիլի:

ԹԻԻՐԻԻԱ

ՏԱԽԻԼԻՔ	
ՊՈՒՆՏԱՅ	
Վալիս 100 քիւ.	12./44.40
Արապա 45-80 լիւ.	9.42
ԱՐԱՆ	
Վալիս 100 քիւ.	հոգ 9.
Արապա 45-52 լիւ.	3.50/9.
ԵՐԵՎԱՆ 100 քիւ.	8.
ՏԱՎՏԱՐ 100	9.30
Արապա	3.70/7.
ՖԱՍՏԱՆԻՍ 100 քիւ.	24./25.
ՏԱՐԸ	6./7.
ԴՕՒՈՂ արապա 35-60 լիւ.	հոգ
Պիւր 100 քիւ.	10/11.
Արապա 75	6./9.
ՊՕՒԱԼԻՔ	
Վալիս քիւսալիլալ պագալիլիլ մալ- լէրիլ պու կէնթիլիլալ, ալիլ ֆը- րանսէ լիւ:	
ԳԱՂԻՔ	2.40/2.60
Շէթիլ շէթէլէլ	1.08
Շէթիլ քէնտէ սանալը-34	
ԲԻՐԻՆՆՆ Զէնօվա շալալը	46.
» Իսկիլիլ	31.
» Բիլիլ	33.
» Ֆիլիլ	հոգ
ԿԱՂ Պաթում Սանալը	9.30
» Թարալ	հոգ
ՁԵՐԻՆ հալը քիւ.	1.60-1.80
ԳՈՐԴՈՒ Իւզիլ	1.90
Եւրոպիլ	7.30

Издатель: X Курбегян

Տպարան «Իրաւունք» Վալիս